Հավելված
ՀՀ փոխվարչապետի
N 250 - Ա որոշման

ԾՐԱԳԻՐ
«ՄԵԾ ՊԱՐՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՄԱՄՆԱԿԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի «Մեծ Պարնու ակադեմիկոս Մ. Մելքոնյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի սանիտարահիգիենիկ պայմանների բարելավում՝ սանհանգույցների վերակառուցմամբ և կեղտաջրերի մաքրման կայանի կառուցմամբ
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և այլ պատրաստիր վճարների արտոնություններից
3.	Բարեգործը	Հայաստանում Ճապոնիայի դեսպանատուն (Հայաստան, 0037, Երևան, Բաբայան փող., 23/4 շենք)
4.	Ծրագիրը կատարողը	«Ազգային ջրային համագործակցություն» գիտական, էկոլոգիական հասարակական կազմակերպություն (Հայաստան 0037, Երևան, Ազատության պող 12/4 բն.40, ՀՎՀՀ 01005235)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Լոռու մարզ, Սպիտակ համայնքի Մեծ Պարնի բնակավայր, Կրթական բնագավառ
6.	Ծրագրի բյուջեն	32,825,000 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի «Մեծ Պարնու ակադեմիկոս Մ. Մելքոնյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ (Լոռու մարզ, Մեծ Պարնի 1-ին փողոց 76, ՀՎՀՀ 06802151)
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2022 ապրիլի 5-ից մինչև 2022 նոյեմբերի 30-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1. Դպրոցի սանհանգույցների վերակառուցման, արտաքին ջրահեռացման համակարգի և կեղտաջրերի մաքրման կոմպակտ կայանի կառուցման նախագծման և տեխնիկական հսկողության աշխատանքների իրականացում 4,260,000 դրամ, 2022 ապրիլի 5-ից մինչև 2022 հոկտեմբերի 31-ը, 2. Դպրոցի 3 սանհանգույցների վերակառուցում, արտաքին ջրահեռացման համակարգի կառուցում և կեղտաջրերի մաքրման կոմպակտ կայանի կառուցման աշխատանքների իրականացում 28,165,000 դրամ, 2022 հունիսի 1-ից մինչև 2022 հոկտեմբերի 31-ը, 3. Ֆինանսական հաշվետվության աուդիտորական ծառայությունների մատուցում 400,000 դրամ, 2022 նոյեմբեր 10-ից մինչև 2022 նոյեմբեր 30-ը

10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1. Մեծ Պարնի դպրոցի սանհանգույցների վերակառուցման, արտաքին ջրահեռացման համակարգի և կեղտաջրերի մաքրման կոմպակտ կայանի կառուցման նախագծման և տեխնիկական հսկողության աշխատանքների իրականացում 4,260,000 դրամ, 2. Դպրոցի 3 սանհանգույցների վերակառուցում, արտաքին ջրահեռացման համակարգի կառուցում և կեղտաջրերի մաքրման կոմպակտ կայանի կառուցման աշխատանքների իրականացում 28,165,000 դրամ, 3. Ֆինանսական հաշվետվության աուդիտորական ծառայությունների մատուցում 400,000 դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակեր-պական ծախսերը	Ֆինանսական հաշվետվության աուդիտորական ծառայությունների մատուցում 400,000 դրամ
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառա-վարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարան
13.	Ծրագրի արդյունավետու-թյան նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով: Նախատեսվում է տրամադրել ամսական հաշվետվություններ Հայաստանում Ճապոնիայի դեսպանատանը, ինչպես նաև ծրագրի ավարտին կատարվելու է ֆինանսական հաշվետվության աուդիտ լիցենզավորված աուդիտորական կազմակերպության կողմից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

07.04.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ